ԿԱՐԾԻՔ

Արման Ալեքսանդրի Ավետյանի ««Խելացի քաղաք» հայեցակարգը և XXI դարի քաղաքային տնտեսության կառավարման ռազմավարության հիմնախնդիրները (Երևան քաղաքի նյութերով)» թեմայով ատենախոսության սեղմագրի վերաբերյալ՝ ներկայացված Ը.00.02 - «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

Թեմայի արդիականությունը

Ա.Ա.Ավետյանի աշխատությունը նվիրված է Երևան քաղաքի համայնքային տնտեսության կառավարման ռազմավարության հիմնախնդիրներին և դրանցից որոշների լուծմանը:

Ժամանակակից աշխարհում գնալով արագանում են ուրբանիզացման տեմպերը, որը քաղաքների դերի բարձրացման հետ մեկտեղ առաջացնում է նաև նոր հիմնախնդիրներ:

Քաղաքային բնակչության պահանջմունքներն այնպիսի արագությամբ են փոփոխվում, որ շատ հաճախ քաղաքը չի կարողանում պատշաճ կերպով և ժամանակին արձագանքել դրանց: Այս առումով առաջ են մղվում քաղաքային տնտեսության բարեփոխման հարցերը, որոնց լուծումն այսօր անհնար է պատկերացնել առանց ժամանակակից տեխնոլոգիաների:

«Խելացի քաղաք» հայեցակարգն առաջարկում է քաղաքային տնտեսության կառավարման հիմնախնդիրների լուծման ժամանակակից մոտեցումներ՝ հիմնված ժամանակակից տեխնոլոգիաների լայն կիրառության վրա: Ընդգրկելով քաղաքային տնտեսության գրեթե բոլոր ուղղությունները և ոլորտները (ֆինանսներ, ենթակառուցվածքներ, բնակչության սպասարկում և այլն)՝ այն վերափոխում է քաղաքն ու դրա ներսում ընթացող քաղաքային գործընթացները: Այս ամենից հայեցակարգը ձևավորում է բազմաչափ մոդել, որտեղ յուրաքանչյուր տարր դինամիկ զարգանում է՝ հաշվի առնելով մարդկանց օրեցօր փոփոխվող պահանջները:

Ժամանակակից պայմաններում քաղաքային տնտեսության զարգացման ռազմավարության մշակման ու անհրաժեշտությունն էլ պայմանավորում է տվյալ հետազոտության արդիականությունը:

Ատենախոսության սեղմագրի հիմնական բովանդակությունը

Ատենախոսության սեղմագրում ձևակերպվել են աշխատանքի թեմայի արդիականությունը, նպատակը և խնդիրները, առարկան և օբյեկտը, տեսական, մեթոդաբանական և տեղեկատվական հիմքերը, ինչպես նաև գիտական նորույթները և հետազոտության գործնական նշանակությունը:

Ատենախոսության հիմնական գիտական նորույթը.

Ատենախոսության գիտական նորույթ հանդիսացող հիմնական արդյունքներն են՝

1. Առաջարկվել է Երևան քաղաքի հանրակրթական և առողջապահական օբյեկտների տեղակայման օպտիմալացման մաթեմատիկական մոդել, որը թույլ կտա հավասարաչափ բաշխել նշված հաստատությունները ամբողջ քաղաքով:
2. Ներկայացվել է Երևան քաղաքի տրանսպորտային ենթակառուցվածքների համակարգային զարգացման նոր մոդելը, համաձայն որի՝ փոխվում է շարժման տարածական և ժամանակային փիլիսոփայությունը, և քաղաքի ստեղծվող նոր ենթակառուցվածքային ենթահամակարգերը թույլ կտան օպտիմալացնել մարդու տրամադրության տակ գտնվող ռեսուրսները (ժամանակ, ֆինանսներ և այլն), ինչպես նաև կրճատել վնասակար արտանետումների ծավալը:
3. Մշակվել է Երևան քաղաքի կոշտ կենցաղային թափոնների հավաքման և տեղափոխման գործընթացի օպտիմալացման մոդել, որը թույլ կտա 1 տոննա աղբի հավաքման ու տեղափոխման ծախսերը հասցնել նվազագույնի:
4. Առաջարկվել է Երևանի քաղաքապետարանի կազմակերպական կառուցվածքի կատարելագործման մոտեցում, այն է՝ ստեղծել քաղաքի կառավարման ինտեգրված կենտրոն, որը՝ որպես թվային ուղեղային կենտրոն, հաշվի առնելով գործող օրենսդրական և նորմատիվ իրավական ակտերի պահանջները, լիարժեք տեղեկատվության հավաքագրման, վերլուծության և գնահատման հիման վրա կառաջարկի քաղաքային տնտեսության կողմից մատուցվող ծառայությունների ոլորտներում համապատասխան որոշումների ընդունման օպտիմալ տարբերակներ:

Սեղմագրում կրճատ և ամփոփ ներկայացված է ատենախոսության բովանդակությունը: *««Խելացի քաղաք» հայեցակարգի էությունը և քաղաքային տնտեսության կառավարման ռազմավարության մեթոդաբանական հիմունքները ժամանակակից պայմաններում»* գլխում քննարկվել են քաղաքային տնտեսության կառավարման ռազմավարության տեսական և գիտական հիմքերն ու առանձնահատկությունները, նկարագրվում է «խելացի քաղաք» հայեցակարգի էությունը, ինչպես նաև ներկայացված է «խելացի քաղաք» հայեցակարգի կիրառման համաշխարհային փորձը:

Ատենախոսության երկրորդ՝ *«Երևան քաղաքի քաղաքային տնտեսության վիճակի վերլուծությունը և դրա զարգացման հայեցակարգային հիմնախնդիրները»* գլխում քննարկվել են Երևանի քաղաքային տնտեսության տեղն ու դերը ՀՀ տնտեսությունում, առանձնացվել են քաղաքապետարանի բյուջեի կառուցվածքի առանձնահատկությունները, վերլուծվում է Երևան քաղաքի զարգացման ռազմավարությունը (2019-2023թ.թ.) և ՀՀ-ում համայնքային տնտեսության կառավարման օրենսդրական ու կազմակերպական հիմքերը:

Ատենախոսության երրորդ՝ *«Երևանի քաղաքային տնտեսության կառավարման կատարելագործման հիմնական ռազմավարական ուղղությունները*

ժամանակակից պայմաններում» գլխում առանձնացվել են հանրակրթական և առողջապահական օբյեկտների բաշխման օպտիմալացման հարցերը, ներկայացվել է Երևան քաղաքի տրանսպորտային օպտիմալ համակարգի ստեղծման խնդիրները, Երևան քաղաքում շրջակա միջավայրի պահպանության համակարգի կատարելագործման հարցերը և առաջարկվել են դիտարկված ուղղություններով լուծման մոդելներ:

Եզրակացություն

Ա.Ա. Ավետյանի ատենախոսության սեղմագիրը գրված է գիտական պատշաճ մակարդակով, հեղինակի տեսական ու գործնական հետազոտությունները համարվում են արդիական: Սեղմագրում ներկայացվում են բազմաթիվ վիճակագրական տվյալներ և գործնական նշանակություն ունեցող առաջարկություններ ու եզրակացություններ: Աշխատանքի ներածական մասում հեղինակի կողմից առաջադրված նպատակներն ու խնդիրները համապատասխան լուծում են ստացել:

Ատենախոսության սեղմագիրն իր բովանդակությամբ համապատասխանում է ԲՈԿ-ի կողմից ներկայացվող պահանջներին և, դատելով դրանից, կարելի է եզրակացնել, որ Արման Ալեքսանդրի Ավետյանի ««Խելացի քաղաք» հայեցակարգը և XXI դարի քաղաքային տնտեսության կառավարման ռազմավարության հիմնախնդիրները (Երևան քաղաքի նյութերով)» թեմայով ատենախոսությունն իրենից ներկայացնում է ինքնուրույն և ավարտուն հետազոտություն, իսկ դրա հեղինակն արժանի է Ը.00.02 – «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Հայաստանի Ազգային Ագրարային
Համալսարանի Հեռակա ուսուցման
դեպարտամենտի պետ,
տ.գ.թ., դոցենտ — Հ. Ս. Հարությունյան

Ստորագրությունը հաստատում եմ՝
Հայաստանի Ազգային Ագրարային
Համալսարանի գիտ. քարտուղար,
գ.գ.թ., դոցենտ — Գ. Վ. Ավագյան

30 նոյեմբերի, 2021 թ.